# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

«21» «մայիս» 2020 թ
ք. Եղեգնաձոր

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 49
### ԿԱՐԵՆ ԱԶԱՏՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 161-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող << Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարեն Ազատյանի դիմումը.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝**

1. 2020 թվականի հունիսի 1-ից հուլիսի 4-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող << Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարեն Ազատյանին տրամադրել 2019-2020 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 24 և լրացուցիչ արձակուրդը՝ 6 աշխատանքային օր տևողությամբ:
2. Կ.Ազատյանի բացակայության ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը դնել Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող << Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի ֆոնդապահ Կարինե Ստեփանյանի վրա:

3. Աշխատանքի ներկայանալու ժամկետը՝ 2020 թվականի հուլիսի 6-ին:

5/21/2020

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ